

բոլսերը, իսկ երկրորդին—Ենտանի կամ մշակելի բոլսերը։ Վայրենի բոլսերը ժողովում են դաշտերում զանազան ժամանակ, նաևած թէ բոլսերի որ մասերը պատրաստ են զործածութեան համար՝ գարնանը բոլսերի տերեները, ամառուալ մօս և ամառը նրանց ցողունները, իսկ աշնանը՝ պատուղները։ Ընտանի բոլսերը մշակւում են բանջարանոցներում և պարտէզներում։ Կը բերենք այս աշխատութեան մէջ երկու խմբին էլ պատկանող բոլսերի ցուցակը այբուբենական կարգով, նշանակելով նրանց թէ հալկական և թէ գիտնական (լատինական), իսկ տեղ-տեղ և ռուսերէն անունները։

### ՎԵՐԵՆԻ ԲՈՅԱԾՈՒԹԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՈՒՆՆԵՐԸ

Վայրենի գործածելի բոլսերը հետևեալներն են։

- 1) Անիսոն—Pimpinella Anisum L., анисъ.
- 2) Ասորեկ, զաղի խոռ—Eruca Sativa L.
- 3) Աւելուկ—Rumex L. բոլսի մի տեսակը։
- 4) Բոխ, բոխի, բողիկ, ճախ—Heracleum villosum Fisch.
- 5) Գալուկ, զողլապատ—Humulus Lupulus L., хмель.
- 6) Գինձ վայրի—Coriandrum-ի մի տեսակը, дикий киннецъ.
- 7) Գեանգիլալ—Teucrium L. (այս ցեղի մի տեսակն է)։
- 8) Գաղձ—Mentha sylvestris L., мята дикая.
- 9) Երիցանուկ, երիցու աղցան—Peucedanum Koch.
- 10) Երնջակ, երնջանուկ—Eryngium campestre L.
- 11) Թելուկ—Atriplex hortensis L., лебеда.
- 12) Թրթնջուկ—Oxalis Acetosella L., дикий щавель.
- 13) Խաւարածիլ, իշխուն, իշղուն—Rhabarbarum, Rheum L.
- 14) Շներեկ—Asparagus officinalis L., спаржа.
- 15) Շտի պաշար, ձնձղան պաշար—Capsella Bursa pastoris Mench, пастушья сумка.
- 16) Կապար (անուանում են և թուրքի բառով քաւառ)—Capsaris herbacea Wild., каперсы.
- 17) Ղանզիլ—Allium ursinum L., черемша.
- 18) Մասուր—Rosa canina L., шиповникъ.
- 19) Նուիկ—Arum Dracunculus L.
- 20) Շրէշ, շրէշու—Asphodelus ramosus L.
- 21) Ուրց—Thymus Serpyllum L., богородичная трава.

22) Պատառուկ, պառեխ—*Convolvulus* L., повитель.

23) Չրկոտեմ—*Nasturtium officinale* R. Br. (*Nasturtium aquatium*), водяной крессъ.

24) Սիրեխ, սվեխ—*Cochlearia officinalis* L., ложечная трава.

25) Սինձ, խինձ—*Tragopogon pratensis*.

26) Փիփերթ, աղջկըտակ—*Malva rotundifolia* L., калачики.

27) Փրփրեմ, փարփինալ, անմերուկ—*Portulaca oleracea* L.

28) Քեղ—*Levisticum officinale* Koch.

Այս բոլոսերից միքանիսը գործ են ածում հում, միւսները իբրև համեմ, երրորդ տեսակները աղն են զնում, իսկ չորրորդ տեսակներից պատրաստում են զանազան տեսակ պատու և ուտիսի կերակուրներ։ Այս իւրաքանչիւր խմբին պատկանող բոլոսերի մասին խօսենք առանձին առանձին։

Խաւարծիլը, ծտի-պաշարը, սինձը և ջրկոտեմն ուտում են հում։ Խաւարծիլը, կամ, ինչպէս Նախիջևանում անուանում են իշղունը, խոտեղէն, ուղղաբուն, երկարակեաց բոլոսերից է և գտնւում է Դարալագեազի (Վալոց ձորի) և Նախիջևանի դաւառի լեռնալին մասերում։ Գարնանը նրա արմատից դուրս է զալիս տափակ ( $\frac{3}{4}$  դիւլմ լանութեամբ) և երկար (մի արշինի չափ) դալար ցողուն, որի կեղեր կանաչ մանիշակագոյն է և ծածկուած մանր փշերով և շերտերով։ Խաւարծիլի ցողունը դալար է, փխրուն և հիւթալից։ Նրա հիւթը շատ դուրեկան է, թթուաշ և քիչ տտիպ համ ունի։ Ուտում են այս բոլոսի ցողունը, որ շատ կազդուրիչ, զովարար և քիչ լուծողական լատկութիւն ունի։ Գարնանը մեծ քանակութեամբ խաւարծիլի ցողուն կարելի է տեսնել Նախիջևանի շուկալում, ուր բերում են գիւղացիք։ Վաճառւում են նրա ցողունը և գիւղերում <sup>2)</sup>։

Ծտի պաշարը և սինձը բուսնում են ամենուրեք՝ սպարտէզներում, ալգիներում, հանդերում և ալն։ Գարնանը ուտում են նրանց տերևները, իսկ երբ ցողուններ են դուրս գալիս, ալն ժամանակ ուտում են և այս վերջինները, միայն առաջ մաշկը պոկում են և աղում։

Ջրկոտեմը կանաչում է և ձմեռը աղբիւրների եղերքում և ճահիճների մէջ։ Նա տարեսոր բոլոս է, նրա տերևները կծու են, ինչպէս ընտանի կոտեմի տերևները, բայց միւնուն ժամանակ մի քիչ

<sup>2)</sup>) Մի տեսակ խաւարծիլի արմատից գեղին ներկ են ստանում և այս նորատակի համար մշակում է այս բոլոսը գաղղիալում։ Պարսկաստանում խաւարծիլի թթուաշ հիւթը եփում են շաքարով կամ մեղրի հետ և ստացւում է մի տեսակ անուշակամ օշարակ, որ զիմանում է ամրող տարի։

դառն են: Զմեռ ժամանակ ջրկոտեմը գործ են ածում իրրե կանաչի<sup>3)</sup>:

Անխոսնը, ասորեկը, վալրի գինձը, պատառուկը, դաղձը, մասուրը և ուրցը գործ են ածում իրրե համեմ:

Անխոսնը ուրիշ երկրներում մշակում են, որովհետեւ նրա սերմից դուրս է գալիս մի տեսակ հոտաւէտ իւղ, որ կարելի է գտնել ամեն մի գեղատան, իսկ մեր երկրում նա գտնւում է վալրենի դրութեան մէջ: Վալրենի անխոսն շատ կայ Դարալագեազի գաւառամասում և մեծ քանակութեամբ բուսնում է Զանգեզուրի գաւառի Ղափան կոչուած գաւառամասում: Հայերն անխոսնի սերմը գործ են ածում զանազան կերակրների մէջ իրրե համեմ:

Ասորեկը, վալրի գինձը, պատառուկը և դաղձը գործ են ածում սպաս կոչուած կերակրի մէջ<sup>4)</sup>, իրրե համեմ: Պատառուկը և ասորեկը բուսնում են ամենուրեք, իսկ դաղձը առուակների եզերքում և առհասարակ խոնաւ աեղերում: Վալրի գինձը բուսնում է

<sup>3)</sup> Այս վալրենի կանաչին շատ սակաւ գործածութիւն ունի Երևանի նահանգում: Շուշում նա ձմեռը վաճառուում է շուկայում:

<sup>4)</sup> Սպասը (Նախիջեանի գաւառում ապուր, իսկ ուրիշ տեղերում թանաւ) դիւղացու ամառուայ համարեա ամենօրեալ կերակուրն է, որ պատրաստում են թանից: Այս վերջինը այն հեղուկն է, որ մնում է խնայու մէջ, երբ մածունը ջրի հետ խառնած հարում են և նրա երեսից քաշում խզը: Թանը ինքն ըստ ինքեան շատ ախորժելի և զովացուցիչ ըմպելի է, բայց աւելի լաւ է նրանից պատրաստած սպասը: Սպաս եփելու համար թանը լցոնում են կաթսայի մէջ, նրա հետ խառնում են մի քիչ կորկոտ և մի բուռն ալիւր, որը առաջուց տրորում են ջրի մէջ մի կամ երկու ձուի հետ, և կաթսան դնում են կրակի վրայ նրակսղի թանը «չկտրուի» (չմակարդուի) եփելու ժամանակ անընդհատ խառնում են շերեփով (մեծ զղալ է, որ Պարսկաստանից գաղթած դիւղացիք անուանում են «չամչայ»): Երբ կորկոտը բաւականին եփում է, այն ժամանակ նրա մէջ զցում են զանազան թէ վալրենի և թէ ընտանի բոյսն՝ ասորեկ, վալրի կամ ընտանի գինձ, պատառուկ, դաղձ, անանուխ, լախուր, թառայ, բազուկի տերեկի կոթը և այլն: Ցալտնի բան է, որ այս բոյսերից սպասի մէջ զցում են նրանց, որոնք նոյն ժամանակ գտնում են նոյսերը՝ զցելուց առաջ կոտորում են, լցնում են նրանց վրայ եռ ջուր և լետոյ քամում են, որ նրանց միջից հիւթը դուրս դայ: Սպասը եփած է համարում, երբ նրա մէջ զցած կանաչեղինը եփում է: Սպասը ուտում են զղալով, մէջը հաց փրթած: Սիրողները ուտելու ժամանակ զցում են նրա մէջ և մի քիչ իւղ: Զմեռը սպասը պատրաստում են չորաթանից: Գա չորացրած թան է.—թանը մակարդում են կամ առանց մակարդելու լցնում են տռալրակի մէջ և երբ նա քամում է, այն ժամանակ ստացւում է պանրի նըման մի զանգուած: Այս վերջինից շինում են փոքրիկ գնդակներ և չորացնում են արեգակի տակ: Այսպիս պատրաստում են չորաթանը, որը սպաս եփելու համար առաջ տրորում են ջրի մէջ, որից ստացւում է թանի նման մի հեղուկ — չորաթանի թան:

չոր և աւազոտ տեղերում։ Շատ է դտնւում ալս բոլորից նախիջեւանի գաւառի Եարիմնակ գիւղի պատահաները անուանուած բլրակների վրայ և Խջմիածնի գաւառի Աշտարակ գիւղի հանդում։

Մասուրի տեսակները շատ են և նրանք բուսնում են զլխաւորապէս լեռնալին տեղերում։ Դա վարդի վայրենի տեսակն է։ Օրդուրաթի գաւառամասում և մասամբ Դարալագեազում զործ են ածում մասրի պտուղները։ Երբ նրանք հասունանում են, գիւղացիք ժողովում են, նրանց մրջից հանում են մանր փշով ծածկուած սերմերը և չորացնում են կամ շինում են նրանցից «լաւաշ», ալսինքն եփում են և թանձր հիւթը չորացնում են ափսէների մէջ։ Չորացրած մասրի պտուղները կամ նրանցից շինած լաւաշը շատ ախորժելի թթուաշ համեմ է կերակրի համար։

Ուրցը պատկանում է շրթնաձեկից ցեղին, բաղմասսա մշտադալար երկարակեաց թփիկ է, խկ տերենները անուշահոտ։ Ուրցի շատ տեսակներ կան։ Ուրցը բուսնում է զլխաւորապէս քարոտ, աւազոտ լեռների վրայ։ Երեանի նահանգում ուրցի տերենները զործ են ածում իրեն պանրի համեմ<sup>5)</sup>։

5) Կանաչեղինով համեմած պանիր պատրաստում են միմիայն Դարալագեազի գաւառամասում և նախիջեանի գաւառի լեռնալին գիւղերում և այն էլ միմիայն հայերը։ Պանիր շինելու համար առաջ պատրաստում են մակարդ (տեղական բարբառով՝ մակա)՝ գառան ստամոքսը լաւ լուանում են, չորացնում են և դնում են կատէ ամանի մէջ։ Նրա վրայ լցնում են ջուր և մէջը զցում են մի քիչ շիպ, մանրացրած կինամոն, հիլ, մեխակ և ու պղպեղ (ամեն մէկից երեք մախալ)։ Այս խառնուրդը տասն օրուաւ մէջ թթում է և դառնում է մակարդ։ Պանիրը պատրաստում են թարմ ոչխարի կաթից։ Ոչխարի նոր կթած և դեռ չտառած կաթի մէջ զցում են մի քիչ մակարդ, որից կաթը միքանի բոպէից լետով մակարդում է և դառնում պանրի զանգուած։ Յետով այս ջրախառը պանիրը լցնում են մաքուր կոտաից կարած տոսլրակի մէջ և դնում են քարի տակ, որ հիւթը քամուի Մակարդը զցելու ժամանակ զցում են կաթի մէջ և կոտորած կանաչեղին՝ ուրց, մի տեսակ վայրի սխուրուկ, գինծ և ալյու Սլապէս պատրաստուած պանիրը գործ են ածում կամ աղաջրի մէջ դրած և կամ պատրաստում են նրանց հորած պանիր։ Դրա համար պանիրը մանր կոտորում են կամ, տեղի լաւ է ասել, փշրում են ձեռքով, աղում են և ճիշտում են խեցեղին փոքր լայնարերան ամանի մէջ (տեղական բարբառով՝ չուռա), որի մէջ այնքան ձեռքով կամ փախտի կտորով ճնշում են, որ բոլոր մանրացրած պանիրը ամանի մէջ միանում է։ Դրանից լետով ամանի բերանը շար են կապում, կատվ ծեփում են և զլխիվալի հորում են չոր դեռնի մէջ։ Ալյուեղ նա աշնանը հասունանում է և կարելի է արդէն հանել դեռնից զարծածելու համար։ Նոյնակը պատրաստում են ժամանակ կոտորում պանիր։ Թանը մակարդում են, տաքացնելով նրան առանց խառնելու, և ալյու մակարդուած թանը քամում են տոսլրամկով և ստացւում է պանրի նման մի նիւթ։ Ալյու ստացուած պանիրը անուանում են ժամիկ, բայց թարմ ժամանակ նա շատ քիչ է զործածւում, այլ աղում են, համեմում զանաղան հո-

Բոխը, կապարը, երնջակը և քեղը գործ են ածում աղը դրած:

Բոխը երկարակեաց բոլս է հովանոցաւորաց ցեղից, բուսնում է լեռնալին տեղերում: Գարնանը այս բոլսի արմատից բուսնում է փոքր, տափակ, գլուխը թաթերով դալար ցողուն, որի մէջ քիչ ախորժելի դառնութիւն է նկատում: Բոխը թարմ ժամանակ գործ են ածում շատ քիչ, այն էլ միմիան եփած ջրի մէջ: Աւելի շատ գործածական է աղը դրած բոխը: Աղը դնելու համար առաջ նրա ցողունները խաշում են և սրսկում սառը ջրով: Աղը դրած բոխը գործ են ածում զանազան տեսակ, ուտում են հացով, ուտում են պասի կերակրի, մանաւանդ լորու հետ, թաթախում են ալրի մէջ և տապակում ձէթով և ալնու հատ համով է բոխիով ձուածեղը:

Կապարը մշտակեաց բոլս է գետնատարած ոստերով, բուսնում է չորս տեղերում, անջուր տափարակների վրայ, ճանապարհների կողքերում, պարսպների տակ և ալնու հատ տեսակ կապարներ կան, որոնցից միքանիաը Եւրոպալալում մշակում են: Հակերը աղն են դնում նրա դալար ոստերը, երբ նրանք գեռ նոր են սկսում բուսնել արմատից: Երեանում աղն են դնում և կապարի կոկոմները և մանր խակ պտուղները: Աղը դնելոց առաջ թէ կապարի ոստերը և թէ կոկոմները և պտուղները խաշում են և դնում են միքանի օր սառը ջրի մէջ, չուտ չուտ փոխելով ջուրը, որ անախորժ համը դուրս տայ: Աղը դրած կապարի զանազան մասերը ուտում են հացով, համեմելալ կոտորած սոխով, քացախով և ձէթով, կամ գործ են ածում իրեն կերակրի համեմ: Կապարի հասունացած պտուղները ճաքում են և բացում է նրանց միջի թանձր կարմիր հիւթը հանդերձ մանր սերմերով: Այս կարմիր հիւթը քիչ քաղցրահամ է և շատ սիրում են մրջիւնները, ուտում են և երեխանները:

Երնջակը և քեղը աղն են դնում Երեանում և էջմիածնի գաւառում: Երնջակը փշոտ տարեւոր բոլս է, խնկի համ ունեցող ցողուններով. բուսնում է բոլոր լեռնալին տեղերում: Քեղը տարեւոր քոլս է, առաւել ախորժելի է անասնոց համար, քան թէ մարդկանց: Աւելուկը, գալուկը, գեանդիլան, երիցանուկը, թելուկը, թըրթընջուկը, ծներեկը, զանդիլը, նուփիկը, շրէչը, սիրեխը, փիփերթը և փրփրեմը գործ են ածում իրեն կերակրի մթերք, ալսինքն

---

տաւէտ և կծու բոլսերով և ճիսում են խեցեղին ամանի մէջ, որը թազում են գետնի մէջ: Այսոեղ ժամիկը պանրի նման հասունանում է և աշնանը կարելի է հանել գործածութեան համար: Ինչպէս հորած պանիրը, նոյնպէս հորած ժամիկը շատ լարգուած պանիրների տեսակներիցն են և համով նման են քաղցիակաւ պատրաստած «ռօքֆոր» անունով պանրին, բայց դիմացկաւն չեն ինչպէս սօքփորը՝ գետնից հանելոց լետոյ դիմանում են մի ամիս կամ հինգ-իւց շարաթ:

պատրաստում են նրանցից զանազան տեսակ կերակրներ:

Աւելուկը և նույիկը թրթնջուկի ցեղից են, բայց նրանց աերեները թթուաշութիւն չունին, ինչպէս թրթնջուկի տերեները: Բուօնում են նրանք լեռնալին տեղերում, աւելի անտառներում են մացառոտ դաշտերում: Գարնանը նրանց տերեները հիւսում են և չորացնում, իսկ ձմեռը գործ են ածում իբրև աղցան<sup>6)</sup>:

Գեանդիլան և սիրեխը միանման գործածութիւն ունին, և գործ են ածում թէ թարմ և թէ չորացրած: Գեանդիլան մի տեսակ սխտորուկ է, որ բունում է աւելի պարարտ հողի վրայ ալգիներում, իսկ սիրեխը գտնուում է ամեն տեղ և ամեն կլիմակի մէջ՝ զաշտերում, ալգիներում, արտերում և ալլն: Այս բոլոերի տերեներից պատրաստում են պասի արգանակ, որ պարսկահայերը անուանում են «բանջար», աւելացնելով այս բառի վրայ բոլսի անունը, որից պատրաստում են արգանակը, ինչպէս է գեանդիլայի բանջար և սիրեխի բանջար<sup>7)</sup>: Հարկաւոր է նկատել, որ սիրեխից պատրաստում են և աղցան և բորանի, իսկ Երեանում նրա ցողունները աղն են դնում և գործ են ածում ինչպէս բոխը:

Թելուկը տարեօր բոլս է, գտնուում է մարգերի մէջ: Գարնանը, երբ նրա տերեները դալար են, եփում են նրանից աղցան և բորանի: Թելուկի հետ եփում են և կոտորած զլոխ սոխ:

Թրթնջուկը թթուաշ տերեներ ունի և զտնուում է զլխաւորապէս մացառոտ և անտառոտ տեղերում: Այս բոլսի տերեները գործ են ածում շատ սակաւ, այն էլ միայն արգանակի մէջ:

Ծներեկը յալտնի է ամենին, բուսնում է ամենուրեք, բայց

<sup>6)</sup> Այս բառով անուանում են ջրի մէջ եփած բոլսի տերեները կամ նրա ցողունները, որ ազում են և ուսում են հացով պաս օրերում: Միքանիքուսերից պատրաստած աղցանը ուսում են քացախով և սխտորով: Աղցանը պատրաստում են բոլսերի թէ չորացրած և թէ թարմ տերեներից: Խոյի մէջ տապակած ձոյի հետ միասին բոլսի տերեները կամ նրա ցողունները նրեանում և շատ տեղերում անուանում են բորանի, որ ուսում են մածունով և սխտորով: Բորանին պատրաստում են և ոչխարի մսի և ճոյի հետ տապակած:

<sup>7)</sup> Վերոյիշեալ բոլսերից բանջար կամ պասի արգանակ պատրաստելու համար՝ գործողութիւնը կատարւում է ալսպէս. կճուճի մէջ եփում են միքից ցորենի ձաւար և յետով բոլսը (գեանդիլայի կամ սիրեխի տերեները) մանր կոտորում են և զցում են նրա մէջ: Երբ նա եփում է, այն ժամանակ լցնում են նրա վրայ ևանշութե, որ սեխի, ձմերուկի արեածազկի սելմերից հանած կաթ է, (սերմերը ծեծում են), խառնելով ջրի հետ, քամում են մազով) և լսույ թթութեան համար աւելացնում են եփած և արորած չոր ալուչաբ կամ սալոր Սիրողները զցում են այս արգանակի մէջ և մէկ կամ երկու կարմիր տաքտեզ: Այս կերակուրը ամեն տեղ զիվերում ընդունուած է և գործածական: Ռւսում են մէջը հաց վրթած:

աւելի խոնաւ տեղերում՝ Ծներելի տեսակները շատ են և շատ տեղերում մշակում են պարտէզներում և բանջարանոցներում։ Երեւանի նահանգում կալ զանազան տեսակ ծներեկներ, բայց ամենաընտիր տեսակը բուսնում է Երեւանի գաւառում գտնուած Խորվիրապ վանքի խոտանեղում, որ ընկած է Երասխ գետի եղերքում։ Այսեղի ծներեկը տափակ է և երկախ (մինչև մի արշին), դալար և նուրբ մսով։ Ծներելից պատրաստում են աղցան կամ բորանիւ Եփում են և ծներելի արդանակ, որ շատ ախորժելի է։

Ղանգիլը բուսնում է Նոր Բալազիդի գաւառի Գարաչչագ (Ծաղկաձոր) անուանեալ գաւառամասի լեռնալին տեղերում։ Գործ են ածում տեղացիք և երեանցիք։ Ուտում են ջրի մէջ եփած և, բացի սրանից՝ դնում են և աղը։ Հիւթը կամ ջուրը, որի մէջ զանզիլը աղւում է, զովացուցիչ մի ըմպելիք է և, ինչպէս ասում են, շատ առողջարար։

Նրէշը խոտեղէն երկարակեաց, խիտ արմատով (արմատախիտ) բոլս է, որ բուսնում է լեռնալին տեղերում։ Գարնանը դեռ չմեծացած տերմներից, որից մեծ քանակութեամբ բերում են վաճառելու շուկաներում, պատրաստում են աղցան և բորանի։ Նրէշի կոճղեզները ընտանի անասունների համար շատ սննդարար ճարակ և, բայց նրանք աւելի գնահատելի են իբրև սոսնձատու արմատ։ Սոսինձ պատրաստելու համար շրէշի արմատը լուանում են, չորացնում և աղում են ջրաղացում։ Դրանից ստացւում է ալիւրանման մի նիւթ հողի գոյնով, «Չրէշ» անունով, որը ջրի հետ խառնած դառնում է սոսինձ։ Նրէշի սոսինձը գործ են ածում կօշկակարները կօշիկի գարշապարի կտոր-կտոր կաշիները կպցնելու մէկ մէկու հետ, և կտաւագործները (ջուլհակները) կտաւի թելերը ամրացնելու համար։

Փիփերթը շատակեաց գետնատարած և ամեն տեղ գտնուող բոլսերից է։ Նրա ցողունների և տերմների մէջ կալ մի տեսակ լորձանիւթ, որ շատ օգտակար է համարւում ստամոքսի համար։ Ուտելու համար եփում են փիփերթի դալար ցողունները տերմների հետ, աւելացնելով մեծ-մեծ կոտորած սոխ։ Աիրողները եփում են նրա հետ և մէկ կամ երկու հատ կարմիր տաքտեղ։ Շատ ախորժելի է փիփերթը քացախով կամ ձէթով համեմած։

Փրփրեմը տարեոր, գետնատարած բոլս է, որ ընաանի բոլսերի հետ գտնուում է մարգերի մէջ։ Ուրիշ երկրներում փրփրեմը (ուտելու համար), ինչպէս ընտանի բոլս մշակում են բանջարանոցներում։ Կալ երկու տեսակ ընտանի փրփրեմ՝ կանաչ և դեղնազոյն տերմներով, որոնց սերմը կարելի է գտնել սերմավաճառների մօտ։ Հալերը գործ են ածում փրփրեմի հաստէիկ դալար ցողունները տե-

բևների հետ միասին, եփում են նրանցից աղցան և բորանիւ, Փըրփիրեմի աղցանը համեմում են քացախով և սխտորով, իսկ բորանին մածունով և սխտորով։ Միքանի տեղերում փրփրեմի ցողունները աղն են դնում և դործ են ածում ձմեռը իբրև սալաթ։

Գալլուկը երկարնակ, փաթաթուող երկարակեաց խոտեղէն բուս է։ Գալլուկը բուսնում է ամենուրեք, մանաւանդ անտառու տեղերում։ Նրա ծաղիկների մէջ կատ մի տեսակ խմորիչ նիւթ, որից պատրաստում են առանձին տեսակ թթուեցուցիչ նիւթ (ճրոյշի) հացի, զարեջրի և ալն խմիչքների համար։ Գարնանը գալլուկի դալար նոր բուսած ոստերից եփում են աղցան։

### ԼԵՑԱՆԻ ԲՈՅԱՐԻ ԳԱՐԾԵԾՈՒԹԻՒՆՆ

Երեանի նահանգի շոգ մասերում չկատ ոչ մի ընտանիք, որ չունենալ բանջարանոց կամ չմշակի ալգու կամ պարտիղի մի անկիւնում զանազան բանջարանոցալին բուսեր, որոնք հալերի համար դարձել են մի անհրաժեշտ կարիք, անպալման պահանջ։ Ալզիների բաց տեղերում կամ առանձին բանջարանոցներում հալերը մշակում են համարեա բանջարանոցալին բոլոր լալտնի բուսերը, որոնց թիւը քառասնից աւելի է։ Մշակում են ալս բուսերը բացառապէս իրանց գործածելու համար, իսկ վաճառելու համար բանջարանոցալին բուսերը մշակում են միմիալն թուրքերը, ալն էլ քաղաքներում և նրանց մերձակալ դաշտերում։ Բացառութիւն կազմում են միմիալն սեխը և ձմերուկը, որոնք մշակում են հալերը և վաճառելու համար<sup>8)</sup>։

Հալերի բանջարանոցներում գոնուում են հետեւեալ բուսերը.

- 1) Անանուխ—*Mentha viridis* L., садовая мята.
- 2) Ասփուր, ասպուր, ասպուզան, ասպուրակ (Նախիջևանի դաւառում կոնջրակ)—*Carthamus tinctorius* L., сафлоръ.
- 3) Արևածաղիկ—*Helianthus annuus* L., подсолнечникъ.
- 4) Արջնղեղ—*Nigella sativa* L., чернушка.
- 5) Բակլալ—*Vicia Faba* L., родъ бобовъ.
- 6) Բամիա—*Hibiscus esculentus* L.
- 7) Բողկ—*Raphanus sativus* L., рѣдька.
- 8) Բաղինջան, բաղրիջան—*Solanum melongena* L.

<sup>8)</sup> Սեխի և ձմերուկի մշակած տեղն Երեանում անուանում են պարսիկ բառով բառու տան, իսկ պարսկահայերը—պախեց։